

VI. ԳՈՐԾԱՌՈՒԹԱԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

2009 թվականի ընթացքում հրավիրվել է ՀՀ ՎՊԽ 21 նիստ: Նիստերի ընթացքում քննարկվել է 88 հարց և արդյունքում ընդունվել է 110 որոշում, այդ թվում՝ 47 նորմատիվ և 63 անհատական:

ՀՀ ԱՎԾ համակարգում աշխատանքի բաժանումն ու մասնագիտացումն իրականացվել է ինչպես գործառնության (ճյուղային և բնագավառային վիճակագրություն), այնպես էլ օպերացիոն (տեղեկատվության օպերատորական մուտքագրում, ստուգաճշտում, խմբավորում, ամփոփում և տրամադրում) սկզբունքներով: Բացի այդ, կիրառվել են նաև ունիվերսալ մասնագիտացման (գյուղացիական տնտեսությունների, հասարակական և սոցիալական խմբերի ինտեգրացված հետազոտություններ) սկզբունքները:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատակիցների մասնագիտական որակական կազմը բնութագրվում է բարձրագույն կրթությամբ կադրերի զերակշռությամբ՝ 87.0%, որից 50.0%-ը տնտեսագետներ են: Աշխատողների 29.0 %-ը տղամարդ է և 71.0 %-ը՝ կին:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմում 2009թ.-ին աշխատանքի է ընդունվել 45 մարդ, նրանցից՝

- քաղաքացիական ծառայության պաշտոններում -31,
- քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոններում -13,
- տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներ -1:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմում 2009թ.-ին աշխատանքից ազատվել է 39 մարդ, նրանցից՝

- քաղաքացիական ծառայողներ - 23,
- քաղաքացիական ծառայության ժամանակավոր թափուր պաշտոնի նշանակվածներ -14,
- տեխնիկական սպասարկում իրականացնող աշխատողներ -2:

Վերապատրաստվել և ատեստավորվել են հետևյալ թվաքանակով քաղաքացիական ծառայողներ.

Քաղաքացիական ծառայության պաշտոնների խմբեր	Վերապատրաստվել են	Ատեստավորվել են	Ատեստավորման արդյունքում չեն համապատասխանել զբաղեցրած պաշտոնին
Բարձրագույն	2	2	-
Գլխավոր	26	21 /որից 15-ը փաստաթղթային եղանակով/	-
Առաջատար	43	45 /որից 28-ը փաստաթղթային եղանակով/	-
Կրտսեր	39	33 /որից 17-ը փաստաթղթային եղանակով/	-
Ընդամենը	110	101	-

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի քաղաքացիական ծառայության թափուր պաշտոնները համալրելու նպատակով անց է կացվել 31 մրցույթ, այդ թվում՝ 28-ը կազմակերպել է ՀՀ ԱՎԾ աշխատակազմը և 3-ը՝ ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի աշխատակազմը:

Արտամրցութային կարգով քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակվել է 7 քաղաքացիական ծառայող:

«Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով ՀՀ ԱՎԾ նախագահի կողմից համապատասխան դասային աստիճաններ են շնորհվել գլխավոր պաշտոններ զբաղեցնող 2, իսկ առավելագույն դասային աստիճաններ՝ 3 քաղաքացիական ծառայողների, իսկ ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի կողմից՝ առաջատար և կրտսեր պաշտոններ զբաղեցնող 15 և առավելագույն դասային աստիճան՝ 1 քաղաքացիական ծառայողի:

ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի և ՀՀ ազգային վիճակագրական ծառայության միջև էլեկտրոնային տեղեկատվության փոխանակման արդյունավետությունն ապահովելու նպատակով, 2009 թվականի հունիսի 1-ից ներդրվել է «Մարդկային ռեսուրսների կառավարման տեղեկատվական համակարգ» (ՄՌԿՏՀ) ծրագիրը:

Միջնաժամկետ ծախսերի ծրագրի (ՄԺԾԾ) հայտի համար հաշվարկվել է 2010, 2011, 2012 թվականներին ՀՀ ԱՎԾ աշխատակիցների համար սահմանվող պաշտոնային դրույքաչափերը և հավելավճարներն ըստ հիմնական աշխատավարձի հաշվարկման սանդղակի համապատասխան գործակիցների:

ՀՀ ԱՎԾ նախագահի՝

- 30.12.2009թ. թիվ 26/Կ-Ա հրամանով հաստատվել է ՀՀ ԱՎԾ «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի 2010թ. աշխատատեղերի ցուցակը,
- 30.12.2009թ. թիվ 27/Կ-Ա հրամանով հաստատվել են ՀՀ ԱՎԾ և աշխատակազմի կառուցվածքային ու առանձնացված ստորաբաժանումների ներքին կառուցվածքը և հաստիքային միավորների թվաքանակը՝ հաստիքացուցակը, ՀՀ ԱՎԾ աշխատակիցների 2010թ. հունվարի 1-ից գործող պաշտոնային դրույքաչափերը և հավելավճարները,
- 30.12.2009թ. թիվ 10-Մ հրամանով հաստատվել են ՀՀ ԱՎԾ Մարդահամարի գործառնական ստորաբաժանման հաստիքային միավորների թվաքանակը (հաստիքացուցակը) և պաշտոնային դրույքաչափերը:

Ի դեմս ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի՝ կնքվել են աշխատանքային պայմանագրեր և համաձայնագրեր Մարդահամարի վարչության և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրում ներառված աշխատակիցների հետ:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն է ներկայացվել տեղեկատվություն՝ ՀՀ կառավարության կողմից ՀՀ աշխատանքի շուկայի վերլուծության նպատակով միասնական համակարգի ստեղծման ծրագրով հաստատված ձևերին համապատասխան:

Իրականացվել է ՀՀ ԱՎԾ հայտարարատու ղեկավար աշխատողների և նրանց փոխկապակցված անձանց կողմից ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ներկայացվող հայտարարագրերի ժամանակացույցի վերահսկում:

Պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում անհատական հաշվառման ներդրումն ապահովելու նպատակով, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ՍԱՊԾ տարածքային կենտրոն է ներկայացվել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի և «Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում» ծրագրի ապահովագրված անձանց՝ մինչև պարտադիր կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում հաշվառելն ընկած ժամանակահատվածում ձեռք բերած ապահովագրական (աշխատանքային) ստաժի հաշվարկման մասին տեղեկատվություն:

Ուսումնա-արտադրական պրակտիկա է կազմակերպվել Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի, Երևանի ինֆորմատիկայի պետական քոլեջի, Ռուսաստանի տուրիզմի և սերվիսի պետական համալսարանի Երևանի մասնաճյուղի, Ռուսական-Հայկական ժամանակակից հումանիտար ակադեմիայի Կապանի մասնաճյուղի, Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի, Երևանի պետական ճարտարագիտական համալսարանի, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի, Գավառի պետական համալսարանի, Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Գյումրիի մասնաճյուղի, Հայաստանի Հանրապետության «Անանիա Շիրակացի» միջազգային հարաբերությունների համալսարանի, Ռուս-հայկական ժամանակակից հումանիտար ինստիտուտի, Խ.Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի, Հայաստանի պետական ագրարային համալսարանի՝ թվով 192 ուսանողների համար:

ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավարի հրամանով՝ 10 քաղաքացիական ծառայողներ խրախուսվել են շնորհակալագրերով:

ՀՀ վարչապետի 2009 թվականի մարտի 9-ի թիվ 181-Ա որոշմամբ ՀՀ վարչապետի հուշամեդալով պարգևատրվել է ՀՀ վիճակագրության պետական խորհրդի անդամ Գագիկ Անանյանը՝ ծննդյան 50-ամյա հոբելյանի ու Հայաստանի վիճակագրության համակարգում բարեխիղճ աշխատանքի և նշանակալի ավանդի համար: